

8427

635

2h-26

64

ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կազմեցին՝ Ա. Ա. յեղ Ա. Թ.

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

635
Կ-28

2002

ՀՈՂԺՈՂԿՈՍԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

2011

- 1. Ուղեցույց անթառային աշխատավորի 50 կ.
- [REDACTED] 20 »
- 3. Հ. Փիբուլյան յեվ Ս. Մելոնյան—Ինչո՞ւ ձեռնառու չե գործարանում յուզ և շվից. պանիր պատրաստելը (սպառ.) 3 »
- 4. Հ. Փիբուլյան—Խոտաբույսերը և նրանց մշակութային յեղանակները (սպառ.) 10 »
- 5. Խ. Սվզլարեցյան—ՀԽՄՀ Հողային Որենսդրւթը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատ. հողդատագործութուն (սպառ.) 40 »
- 6. Պ. Հեֆիմյան.—Թթենու մշակութունը (սպառվ.) 10 »
- 7. Պ. Հեֆիմյան.—Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը 10 »
- 8. Խ Յերիցյան.—Կաթնատնտեսութայն գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) (սպառված) 1ա. 50 »
- 9. Վ. Մելիք-Շահնազարյան.—Ծխախոտի մշակութունը (սպառված) 20 »
- 10. Ս. Ֆրիգոլին.—Տասը պատգամ անասնապահին 20 »
- 11. Խ. Յերիցյան.—Անհատական, թե՛ կոոպ. կաթնատնտեսութուն 10 »
- 12. Հ. Հարություն.—Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառ.) 5 »
- 13. Մ. Թումանյան.—Շարքացանը և նրա նշանակութ. 15 »
- 14. Իս. Տեր-Ներսիսյան.—Ինչպե՞ս մշակել խաղողի այգիները (28 նկարով) (սպառ.) 35 »
- 15. Յերեսեսու դեպի գուզ.—Անդրկովկասյան Յերկրային կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին. [REDACTED] (սպառված) 15 »
- 16. Հայաստանի կոմսունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Չորրորդ Պլենումի Բանաձեվերը (սպառված) 15 »
- 17. Ռ. Երմեյան.—Խոշոր յեղջուրավոր անասունների ժանտախտը (սպառվ.) 15 »

635

4-26

Այ

ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կազմեցին՝ Ա. Ա. յեվ Ա. Թ.



13118-58 / 15521 - 52

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր գործած սննդամթերքների մեջ, հացահատիկներեց հետո, բանջարեղենները բռնում են յերկրորդ տեղը: Այնպիսի բանջարեղեններ ինչպիսիք են կարտոֆիլը, կաղամբը, պամիդորը, սոխը լոբին, վոսպը յեւ ալն, վորոնք սովորաբար մշակվում են տներին կից գտնվող բանջարանոցներում, տարեցտարի անցնում են դաշտ յեւ բռնում են աչքի ընկնող տարածութիւններ:

Մանավանդ դա տեղի յե ունենալու այսուհետեւ, յերբ որեց-որ բազմանում ու ընդարձակվում են մեր կոլտնտեսութիւնները յեւ բանջարեղենները, վորպես ապրանքային մթերք, այդ տնտեսութիւնների ցանքաշրջանի մեջ բռնելու յեն պատկառելի տեղ: Համաձայն Հողփողկոմատի կազմած հեռանկարային հնգամյա ծրագրի, բանջարեղենների, դրանց մեջ նաեւ կարտոֆիլի ու ընդեղենների մշակութիւնը տարեցտարի ընդարձակվելով, հեանվյալ պատկերն ե ստանալու:—

1929		1930		1931	
Հեկտար	Տոնն	Հեկտար	Տոնն	Հեկտար	Տոնն
16,340	213,396	17,715	246,710	21,964	286,964

ՊԵՏՏՐՈՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրասեղ. № 2115 (բ.)

Տիրած 2000

Պատվ. № 600

29597-Ա.հ.

1932		1933	
Հեկտար	Տոնն	Հեկտար	Տոնն
25.045	323.680	27.890	361.880

Տարածության ընդարձակման հետ ավելանալու յետևանքով դրանց բերքատվությունն ու ապրանքայնությունն այնքան, վոր բանջարեղենները կազմելու յեն թե՛ ներքին շուկայի յեվ թե՛ արտասահմանության աչքի ընկնող մթերք: Յեվ դա հասկանալի յե, յեթե աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, վոր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն ել բանջարաբուծության այս կամ այն խմբավորման համար ունեն գարգանալու բոլոր պայմանները. — որինակ սոխը, պամիդորը, բադրջանը, տաքտեղը դաշտավայրերում, ընդեղները՝ լոբին, սիսեռը յեվ վոսպը, նաև վարունգը՝ նախալեռնային շրջանում, կաղամբը, կարտոֆիլը, բազուկը, մակնդեղը յեվ այլն՝ լեռնային շրջաններում, իսկ կանաչեղենն՝ ամեն տեղ:

Նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, մենք այս գրքույկում տալիս ենք գործնական բանջարաբուծության ամենատարրական գիտելիքները բոլոր նրանց համար, վորոնք հետաքրքրվում են այդ կուլտուրաների մշակութամբ:

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Բանջարանոցի համար պիտանի յեն Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն ու վարելահողերը՝ յեթե միայն նրանք ունեն:

ա) Վոռոզման համար ջուր, բ) յեթե բանջարաբուծութամբ պարագող տնտեսությունն ունի բանվորական ազատ յեվ հարկավոր թվով ձեռներ: Առանց վոռոզման ջրի բանջարանոցը, ուր և նա լինի, վտանգի տակ ե գտնվելու, իսկ առանց անհրաժեշտ քանակով աշխատավոր ձեռքերի՝ անկարելի յե բանջարանոցում տանել բոլոր կարևոր աշխատանքները, առանց վորոնց բանջարանոցները կխեղդվեն մուխտտերից և բանջարանոցը կընդունի վողորմելի տեսք, տալով ամենաչնչին բերք, յերբեմն նույնիսկ վնաս:

Հաջողության մյուս պայմանները՝ լավ սերմը, գործիքներն ու մեքենաները միշտ ել, յեթե կամք ու ցանկություն լինի, կարելի յե գտնել, պատրաստել ու ձեռք բերել Հայգյուղկոոպի միջոցով:

Անցնենք բանջարանոցի բյույսերի մշակության յեղանակներին առանձին-առանձին:

1. ԿԱՐՏՈՓԻԼ


Հայաստանում բանջարանոցային բույսերից ամենից տարածվածը կարտոֆիլն է: Նա հաշտողությամբ բսնում է ինչպես մեր ամենաբարձր, ցուրտ գոտիներում, նույնպես և լեռնային ու նախալեռնային շրջաններում. միայն շատ տաք դաշտավայրերումն է, վոր նա իրեն իր հարագատ տեղում չի զգում: Սակայն այնտեղ ել հաշտողությամբ կարող են մշակվել կարտոֆիլի վաղահաս տեսակները, վորոնք արդեն հունիսի սկզբներին այնքան են մեծացած լինում, վոր կարող են շուկա հանվել և բարձր գներով ծախվել: Վաղահաս կարտոֆիլի մշակության համար ամենից հարմար են՝ Յերեանը, Հրազդանի, Սարգարաբաղի, Ղամարլվի շրջանները և Սանահնի ձորը, սկսած Աղթալայից մինչև Սաղախլո կայարանը՝ յերկաթուղու գծի մոտ գտնված գյուղական հողերում: Յերկաթուղու մոտիկությունը հնարավորություն կտա գյուղացուն վաղահաս կարտոֆիլը բանվորական և արդյունաբերական մեծ քաղաքների շուկաները հանել և լավ գներով վաճառել:

Տեսակները.— Կարտոֆիլի տեսակները շատ են և բաժանվում են յերեք խմբի— կեռի կարտոֆիլ, վոր լինում է շատ խոշոր և տալիս է մեծ

բերք և գործադրվում է անասուններին կերակրելու համար, գործարանային կարտոֆիլ, վորը վերամշակելով ստանում են ոսլա և սպիրտ և, վերջապես, ուսելու կամ սեղանի կարտոֆիլ, վորը ծառայում է մարդկանց համար վորպես ամենագործածական սննդամթերք:

Այս վերջիններից Անդրկովկասում ամենից լավ տեսակներ են համարվում՝ Լոուս սպիտակ և դեղին տեսակները, Աբաբանի մոխրագույն կեղևով սպիտակ, դիմացկուն տեսակը, Ախալցխայի բաց վարդագույն վաղահաս տեսակը և Բորժոմի սպիտակ ու կարմիր տեսակները:

ՍԵՐՄԱՑՈՒ.— Կարտոֆիլը տնկում են կամ ամբողջ պլալարներով՝ կամ կտրատելով և հողի մեջ դնելով նրա կտորները, վորոնց վրա կա



Նկ. № 1. Կարտոֆիլի աչքերը:

մեկ կամ յերկու աչք: Ամբողջ կարտոֆիլներ ցանելիս ընտրում են ամենից առողջները և մի-

Հակ մեծութունն ունեցողները: Մի հեկտարի վրա տնկում են 80—120 փուլթ:

Հողը.—Կարտոֆիլը սիրում է խորը, փուխը և բերրի հող: Դրա համար ել կարտոֆիլի համար ամենից լավ հողեր համարվում են ավազա-կավային, կավա-ավազային և մանավանդ թեթև սեփհողերը: Յեթե ստիպված ենք կավային հողերում տնկել, աչդ դեպքում անհրաժեշտ է նախապես լավ աղբել հողը և գուլթանով կամ բահով փուխրացնել: Կարտոֆիլը սիրում է մոխիր և ախն ել վոչ շատ. հեկտարին 8—10 սալ մոխիրը բավական է, վորպեսզի ստացվի առատ բերք, յեթե միախն հողը, ինչպես ասացինք, խորը փխրացված է: Կարտոֆիլը տավարի թարմ գումաղը չի սիրում, նրան պետք է տալ գոնե յերկու տարվա փտած գոմաղը:

Հողի ՄՁԵԿՈՒԹՅՈՒՆԸ.—Կարտոֆիլ ցանելու համար հողի լավագույն մշակութայն յեղանակը հետևյալն է. ամառը—ցորենի, գարու հնձից անմիջապես հետո հողը պիտի խոզանավար անել, ընդամենը՝ 5—8 սանտ. խորությամբ, հետո, ուշ աշնանը-նոյեմբերին, ցրտերն ընկնելուց քիչ առաջ, արտը վարել մեծ գուլթանով կամ բահով խորը փորել 15—20 սանտ. խորությամբ ու թողնել ձմրան սառնամանիքի տակ:

ՁՆՆՔԸ.—Գարնանը, ալդպես մշակված հողը,

յեթե նույնիսկ կավային է, փշրվում, փխրանում է գրեթե իր ամբողջ խորությամբ ու իր մեջ պահում ձյան ու անձրևաջրերի մեծ պաշար: Մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին, հենց վոր հողը սկսեց ցամաքել, արտը պետք է մեծ փոցխով փոչխել, նախապես մոխիր շաղ տալով վրան և ապա չուլթով կամ գուլթանով ակոսներ բացել ու շարքերով տնկել կարտոֆիլը՝ մեկը մյուսից 22—25 սանտիմ. հեռավորության վրա, իսկ շարքը—շարքից՝ 80 սանտիմետր:

Տնկած կարտոֆիլները գուլթանով կամ բահով պետք է ծածկել ախնպես, վոր ծածկող հողաշերտը 8—10 սանտիմետրից ավելի չլինի: Դրա համար գուլթանը դառնալիս իր դոշով ծածկում է տնկածը և յերկու շարք դատարկ գնալով՝ բացում է յերրորդ ակոսը, ուր նույն կերպ տնկում են կարտոֆիլը և գուլթանով նորից ծածկում, և այսպես շարունակվում է աշխատանքը մինչև արտի վերջը: Վաղահաս կարտոֆիլ կարելի չէ Հայաստանի դաշտավայրում ցանել մարտ ամսի կեսերին, իսկ լեռնային շրջաններում՝ ապրիլից վոչ շուտ, վորովհետև մարտի ցրտերը կարող են ցրտահար անել նրա մատղաջ ծիլերը և նույնիսկ հողի միջի պալարները: Լեռնային բարձր տեղերում ցանքի լավ ժամանակը՝ ապրիլի յերկրորդ կեսն է, նույնիսկ մայիսի սկիզբը:

կա կարտոֆիլ ցանելու շրունքուն» կոչված չեղանակը, վոր կատարվում է այսպես. պարանով կամ մարկյոր*) գործիքով փոցխած, հավասարեցրած արտի վրա շարքերի համար գծեր են քաշում, — շարքը-շարքից 80 սանտիմետր հեռավորությամբ: Մեկ բանվոր բահով այդ շարքագծով զնալով բացում է 5—8 սանտիմ. խորության փոսեր, իսկ նրա լեռից յեկող մյուս բանվորը այդ փոսերի մեջ գցում է մեկ մեկ, իսկ լեթե մանր են՝ յերկու-յերկու կարտոֆիլ և ձեռքով ծածկում է հողը այնպես, վոր կարտոֆիլը ծածկվի առառավելը 2—3 մատի հաստությամբ: Այսպես անցնելով շարքից-շարք՝ ավարտում են ցանքը:

Ինչպես վերն ասացինք, ամեն մի հեկտարին տնկում են 80—120 փութ կարտոֆիլ՝ նայած շարքերի հեռավորության և կարտոֆիլի մեծության: Վորքան խոշոր է կարտոֆիլը, այնքան շատ սերմ է գնում, լեթե շարքերը նեղ են, իսկ փոսերը մոտ-մոտ, և ընդ-

*) Մարկյորը 2—2½ մետր յերկարության փոցխ է, վորն ունի միմյանցից հավասար հեռավորության վրա գտնվող 3—4 վերջուկ յերկարության ատամներ: Այդ ատամները գծում են հողի վրա հավասար հեռավորության գծեր: Անհրաժեշտ գործիք է շարքացանի համար:

հակառակը, վորքան հեռու-հեռու յեն շարքերը և հեռու-հեռու յեկ ցանում են, այնքան քիչ սերմացու յե գնում:

ԽՆՆՄՔԸ — Յերկու-յերեք շաբաթից յերևում են ծիլերը: Յեթե մինչ այդ ցանած արտում մոլախոտեր են բսնում, պետք է թեթև կերպով փոցխելով՝ քաղհանել: Հենց վոր կարտոֆիլը



Նկ. № 2. Կարտոֆիլի պարունների զարգացումը հողի մեջ:

թուփը դառնում է 12—18 սանտիմետր, անհրաժեշտ է լայն և սուր թոխիններով կատարել առաջին թոխո մը, այդ ժամանակ կատարելու յե նաև առաջին բուզլիցքը այնպես, վոր կարտոֆիլի

Թփեր մինչև տերևները ծածկվեն հողակույտով: Այս աշխատանքների հետ միաժամանակ ինքն իրեն շինվում են շարքերը, վորոնց միջով անցնելու յե կարտոֆիլը ջրող ջուրը, յեթե նա վռոգվելու յե:

Առաջին քաղհանից և բուզլիցքից հետո, կարտոֆիլի Թփերն սկսում են ուժեղ կերպով զարգանալ և, չանցած 20 որ, կարիք ե զգացվում Թե՛ բուզլիցքը և Թե՛ քաղհանը կրկնել յերկրորդ անգամ: Այս անգամ արդեն բուզլիցքը կատարելիս պետք ե բույսի չորս կողմի հողը խորը փխրացնել: Նույնը պիտի անել նաև մի 20 որից հետո, և կրկնել դարձյալ մի 20 որից հետո. այսպիսով կարտոֆիլն իր զարգացման 4 ամիսների ընթացքում 3—4 անգամ փուխրացվում և քաղհանվում ե:

Մեծ տարածությունների վրա այս աշխատանքները պետք ե կատարել բուզլիցք մեքենայով—կուլտիվատորով: Կուլտիվատորին լծում են մի ձի կամ մի զույգ յեզ: Դրանով կատարած աշխատանքը ձեռքով արածի համեմատությամբ՝ կրկնակի արագ ե կատարվում և կրկնակի յել եժան ե նստում:

Ջրելը.—Պետք ե ամեն կերպ խուչս տալ կարտոֆիլը շատ ջրելուց: Ամենաչոր տեղերում իսկ յերեք-չորս ջուր տալն ել բավական ե, յեթե

միայն հողը լավ փուխրացված ե և արար քաղհանված: Սովորաբար յերկու-յերեք անգամ ջրելը միանգամայն բավական ե, և դա ամենից լավ ե անել յերկրորդ և յերրորդ փուխրացումից հետո, յեթե, իհարկե, ջրելու կարիք ե զգացվում: Պիտի նկատի ունենալ, վոր ջուրն ամրացնում ե հողը և անհամացնում կարտոֆիլը:

Բերք ժողովելը.—Կարտոֆիլը հողից հանում են, հենց վոր նրա Թփերի տերևներն սկսում են Թառամել—դեղնել: Կարտոֆիլի հասած լինելը իմացվում ե, յերբ բուժ մատով հուպ տալիս՝ նրա կեղևը կամ չի պոկվում, կամ Թե պոկվում ե դժվարությամբ: Չհասած դրությամբ ժողոված կարտոֆիլը յերկար չի դիմանում, հոտում ու փտում ե, իսկ շատ ուշ ժողովելն ել վտանգավոր ե, վորովհետև աշնան վերահաս ցրտերը կարող են նրան ցրտահար անել: Կարտոֆիլը հանում են կամ բահերով, յեթե փոքր տարածյան վրա յե, կամ փոքր գութաններով, վորն անցնելով միջնակների միջով, իր խոփով շուռ ե տալիս հողը և կարտոֆիլները հողի յերես են դուրս գալիս: Կան հատուկ գործիքներ, վորոնք կոչվում են կարտոֆիլահանիչներ: Այդ գործիքներով հանած կարտոֆիլները չեն վնասվում ու չեն կիսվում-վիրավորվում, մի բան, վոր անում ե Թե՛ բահը և Թե՛ սովորական Թեթև գութանը:

ՌԵՐՔԸ.—Կարտոֆիլը, նայած տեսակին ու մշակությանը, հեկտարից տալիս է 350—1200 փութ կամ 100—200 ցենտներ բերք. վաղահասաների բերքը սովորական տեսակների բերքից պակաս է լինում, բայց բարձր է գնահատվում:

ՊԱՀՆԵԼ.—Կարտոֆիլը, յեթե խնամքով է պահվում, դիմանում է վեց-յոթ ամիս: Դրա համար հարկավոր է ջուրով փնամածներն ու հիվանդները, վրայից ու միջից մաքրել հողի կտորներն ու ցեխը, փռել արևի տակ մի քանի օր և հետո միայն չոր նկուղում դարսել, ծածկել ծղոտով և վրան 4 մատ հաստությամբ չոր հող ածել: Պահելու վեց ամսվա ընթացքում կարտոֆիլը պակասում է 8—10 տոկոս: Սերմացու կարտոֆիլը պետք է ջուրով աշնանից—ընտրելով ամենից առողջներն ու միջակ մեծություն ունեցողները և պահել առանձին:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.—Հաճախ կարտոֆիլը վարակվում է սեվ փսում հիվանդությամբ. դա յերևում է նրանից, վոր հուլիսին և օգոստոսին տերևները ծածկվում են գորշ ու սև բծերով, վորից հետո տերևները չորանում են: Այս հիվանդությունը տերևներից անցնում է կարտոֆիլին և հետզհետև վարակում է գրեթե բոլորին: Հիվանդությունը կարելի չէ բուժել՝ զատելով առողջները հիվանդներից և բորդոյան հեղուկով

(100 ֆունտ ջրի մեջ լուծելով 1 կիլո արջասպ և 4 կիլո կիր), վորի լուծույթի մեջ լցնում են կարտոֆիլը, պահում են մի քանի րոպե և ապա հանում են ու չորացնում: Նույն լուծույթով պետք է բուժել կարտոֆիլի թվերը, յերբ հիվանդությունը դեռ նոր ելերևացել:

Սրակիչների մեջ լցնելով այդ լուծույթը, սրսկում են հիվանդ տերևները, աշխատելով, վոր դեղը նստի տերևների յերեսին և կպչի նաև նրա ցածի մակերևույթին: Յերկու անգամ սրսկելը բուժում է այդ հիվանդությունը, վորը 60—80 տոկոսով փաստում է բերքը:

2. Կ Ա Ղ Ա Մ Բ

ՀՈՂՆ ՈՒ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Կաղամբը սիրում է խոնավ և թարմ աղբով պարարտացրած հող: Կաղամբի հողը պետք է նախապես աղբել, հեկտ. տալով 75—100 սայլ աղբ և վաղ աշնանից խորը վարել: Գերադասելի չէ ձիու աղբը, կամ խառը՝ ձիու և տավարի: Յեթե այդ քանակությամբ աղբ ձեռք բերել դժվար է, այդ դեպքում ավելի լավ է, փոխանակ աշնանն ամբողջ հողն աղբելու, գարնանն աղբել միայն այն ակունքերը, ուր անկվելու յեն կաղամբի շիթիլները: Դրանից առաջ անհրաժեշտ է աշնանը

վարած հողը գարնանը վաղ նորից վարել կամ
լավ բահել ու փոցխել և հետո գուլթանով ակոս-
ներ բացել շիթիլների համար: Ակոսները պետք
է բացել մեկը մյուսից 1—1¹/₄ մետր հեռավո-
ւորության վրա և ամենաքիչը՝ 16—20 սանտ. խո-
րուլթյամբ:

ՇԻԹԻԼՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ.— Ժամա-
նակ շահելու և լավ շիթիլներ ստանալու համար
պետք է լավ աղբած հատուկ ժարգերի մեջ ցա-
նել կաղամբի սերմը, մարգերը պաշտպանել
ցուրտ քամիներից և գիշերները ծածկել ճյուղ-
ներով ու հասիքներով: Ամենից լավ է ունենալ
հատուկ սախ ջերմոցներ*) , ապակյա ծածկոցներով:
Այդ ջերմոցներում կաղամբը ցանում են հուն-
վարին կամ փետրվարին: Յեթե տաք ջերմոց-
ներ պատրաստելը դժվար է, այդ դեպքում կա-
րելի չէ նրանց մասամբ փոխարինել կիսասախ
ջերմոցներով, պայմանով, վոր մարզը փորված
լինի կես մետր խորուլթյամբ, հողի կեսը դուրս
հանվի և մեջը լեցվի ձիու աղբ ու վրան ամվի 2-3
վերեոկ հաստուլթյամբ ավազախառը փուխը հող:
Այդպիսի ջերմոցներում ցանած սերմը մի ամ-
սում բուսնում է և տալիս է բավականի լավ
շիթիլներ, վորոնք հենց վոր դառնում են 10-25

*) Տաք ջերմոցներ պատրաստելու յեղանակը
ցույց կտա շրջանային գյուղատնտեսը:

սանտ. անմիջապես տեղափոխում են իրենց
մշտական տեղը: Շիթիլներից պետք է ընտրել
այնպիսիները, վորոնք առողջ են, փարթամ և
վորոնց արմատները լավ զարգացած են և ունեն
շատ թելիկներ:

1318-18

ՇԻԹԻԼՆԵՐ ՏՆՆԵԼԸ.— Ինչպես ասացինք, շի-
թիլները պետք է տնկել արդեն պատրաստի ա-
կոսների մեջ, վորոնք նախորոք կամ ամբողջո-
վին են աղբած կամ ակոսների մեջ ձիու աղբ է
ածվան: Փայտե բիրով 16-20 սանտ. փոս են
բացում և քիչ թեք դրուլթյամբ տնկում են շի-
թիլները ու անմիջապես հողով ծածկում մինչև
շիթիլի տերևները, և ձեռքով շուրջը մի փոս բա-
ցում: Մեծ տարածուլթյունների վրա գործն ա-
րագ է գնում, յեթե մեկը բիրով փոսեր է բա-
ցում, իսկ մյուսը տնկում է շիթիլը և ծածկում
է հողով: Շիթիլները տնկում են մեկը-մյուսից
30—40 սանտիմետր հեռավորուլթյան վրա՝ ուղիղ
շարքերով: Իրա համար լավ է ակոսի մի ծայրից
մյուսը բարակ պարան կապել և պարանի ուղ-
ղուլթյամբ փոսեր բացել ու շիթիլներ տնկել: Կանո-
նավոր, ուղիղ և միմիանցից հավասար հեռավո-
րուլթյան վրա տնկված շիթիլները հետագայում
դգալիորեն հեշտացնում են կաղամբի համար ան-
հրաժեշտ մյուս աշխատանքները— ջրելը, բժշկե-
լը, միջնակների փուխըացումն ու քաղհանը:


15521-50
Республиканская Библиотека

Շիթիլներ տնկելը պետք է հարմարեցնել ապրիլ 20—30 ին, յերբ ցրտերն անցած են լինում: //

ԱՌԱՋԻՆ ԶՈՐԲ.— Շիթիլները տնկելուց հետո անմիջապես պետք է ջրել դույլով կամ ձրն-ձյուղով: Չուրը պիտի կամաց ածել շիթիլի շուրջը շինած փոսերի մեջ: Մի դույլ Չուրը բավական է 5—8 շիթիլի: Այս առաջին Չուրը կաղամբին բավական է մոտ յերեք շաբաթ: Տաս մշակը մի հեկտարի վրա մի որում կարող են կատարել այս բոլոր աշխատանքները:

ԽՆՆՄՔԸ.— Մինչև շիթիլների իրենց նոր տեղում ամրանալն ու հարմարվելը և ապա մեծանալը, արտի վրա բուսնում են բազմաթիվ մոլախոտեր: Բանջարանոցի աջողութունը կախված է առաջին հերթին այդ մոլախոտերն իր ժամանակին և հիմնովին քաղհանելուց ու վոչընչացնելուց: Առաջին մոլախոտեր պետք է քաղհանել կամ ձեռքի թոխիներով և ուրագներով կամ, յեթե կաղամբուտը մեծ տարածութուն է բուսում, ձեռքի կամ ձիաքարշ կուլտիվատորներով: Այս առաջին աշխատանքից անմիջապես հետո պետք է հողը փուխրացնել ու կաղամբի բուզերը լցնել թոխիներով կամ բուզիցք մեքենայով: Սրանով յերեք նպատակի լինք հասնում. առաջինը մատղաշ կաղամբի բույսը լավ արմատակալում է, յերկրորդ՝ Չուրն ու խոնավությունը

յերկար է մնում հողի մեջ և յերրորդ՝ սրանով վոչնչացնում ենք կաղամբուտի մեջ յեղած բոլոր մոլախոտերը, վորոնք զարգանում են ի հաշիվ կաղամբի անհրաժեշտ սննդանյութերի և խանգարում են կաղամբի լավ զարգանալուն:



Նկ. № 3. Կաղամբ Բրաունշվեյգի:


Յերկրորդ ուժեղ բուզ տալը պետք է անել մի ամսից հետո, յերբ կաղամբը սկսում է արդեն գլուխ բուսել: Բուզ տալը և քաղհանը կատարվում է 4—5 անգամ՝ ամեն յերկու շաբաթը: Յուրաքանչյուր քաղհանից հետո պետք է կաղամբը ջրել և միջանի որ հետո բուզը տալ:

ՊԵՏՔԸՐ ՎՆԱՍՏՏՈՒՆԵՐԻ ԳԵՄ.— Կաղամբի վնաս

սատուներից ամենից վտանգավորները կաղամբի վորդերն են, վորոնք զարգանալով դեղնագուլն ձվիկներից, ազահաբար ծամում են կաղամբի տերևները, թողնելով միայն նրանց միջի լերկար թելերը: Այս ձվիկներն առաջ են գալիս կաղամբի թիթեռներից, վորոնք հունիսին նստում են կաղամբի տերևների ցածի մակերևույթի վրա և միանգամից ածում միջանի հարյուր ձու: Սրանցից մի քանի որում դուրս են գալիս մանր վորդեր ու սկսում են ուտել տերևի կեղևն ու նրա միջուկը՝ անցնելով տերևից տերև: Ամենից լափս է այդ ձվիկները վոչնչացնել տերևների վրա տրորվելով, քանի դեռ նրանք թրթուռ չեն դարձել, իսկ լեթե արդեն վորդեր են դարձել, պետք է խնամքով ժողովել նրանց ու տրորել: Սա պետք է անել ամեն որ՝ լերկու շաբաթ շարունակ, մինչև նրանց կատարյալ վոչնչացումը:

Մյուս վնասատուն կաղամբի լվիկն է.— դա փոքր, սև գույնի միջատ է, վորը նստում է տերևների վրա և նրանց ծակծկում է: Սրանց դեմ կարելի չէ կռվել մախորկայի լուծույթ սրսկելով: 100 գրամ մախորկան պիտի լեփ տալ 10 դուլլ ջրի մեջ և ստացված հեղուկը լցնել սրսկիչի մեջ ու խնամքով սրսկել կաղամբի բոլոր տերևները: Մի հեկտարին գնում է 4—5 կիլո մախորկա:

Շուկայում ծախվում է մախորկայի պատրաստի փոշի: Փոշիի գործածությունը զբված է փաթեթի վրա:



Նկ Ձ 4. Կաղամբի վորդը: ա—Թրթուռը, բ—Թիթեռը, գ—Ածած սերմը (ձվիկները):

Բերքի ժողովելը.—Նայած կաղամբի տեսակներին — վաղահաս, միջահաս և ուշահաս—կաղամբը գլխակալում է ոգոստոսից մինչև հոկտեմբերի վերջը: Ժողովելուց մի քանի շաբաթ առաջ հատուկ դանակով կամ հենց ձեռքով հեռացնում են կաղամբի ստորին մասի աղտոտած, մասամբ թոշնած ու ցած ընկած տերևները. դրանից հետո կաղամբը ամբողջակի ու գեղեցիկ տեսք է ստանում և, կարծես, ավելի չէ ամբանում: Հետո հասնում է կաղամբ ժողովելու շրջանը, վորը չպետք է շատ ուշացնել, հակառակ դեպքում կցրտահարվի: Ճիշտ է, կաղամբին մի քիչ ցուրտ են ուտեցնում—բայց դա չպետք է չափազանցացնել: Նայած տեղին ու լեղանակին, նրա կտրելը

կարելի յե յերկարացնել մինչև նոյեմբերի յերկ-
րորդ կեսը: Կաղամբը կտրոււմ են սուր գանակ-
ներով՝ գետնից վեր և զգուշութեամբ փոխա-
դրոււմ են չոր տեղ:

ԲԵՐՔԸ ՅԵՎ ՏԵՍԵՆՆԵՐԸ.—Մի հեկտար կաղամ-
բուտից, նայած կաղամբի տեսակին, ստացվում
է 1000—3000 փութ, կամ 16—45 տոնն կա-
ղամբ, ըստ վորում վաղահասները լինում են ա-
վելի մանր, իսկ ուշահասները՝ ավելի խոշոր:
Վերջիններից նշանավոր են Բրաունեվեյգի, Բոլ-
դարական, Կոլումենկա տեսակները, վորոնց ա-
մեն մի գլուխը քաշում է 5—12 կիլո: Վաղա-
հաս տեսակներից նշանավորներն են՝ ուու-
սական Բրոնկան, Երճուրսի, Լադոգի տեսակ-
ները: Հայաստանում լավ տեսակներն են Լոռու
և Լենինականի ուշահաս, խոշոր տեսակները:

3. Պ Ա Մ Ի Գ Ո Ր

Պամիդորը (տոմատ, կարմիր պորընջան)
տաք կլիմայի բույս է, լավ բուսնելու համար նա
պահանջում է մոտ հարյուր հիսուն տաք որ,
միջակ վոռոգում և ամենաուշադիր խնամք ու
մշակութուն:

ՀՈՂԸ ՅԵՎ ՆԲԸ ՄՇԵԿՈՒԹՅՈՒՆԸ.—Պամիդորը
սիրում է փուխը, տաք և փոսած մասերով (աղբ)

հարուստ հող. այդ պայմաններում է, վոր նա
լավ զարգանում է և տալիս է լավ ու մեծ բերք:
Հողի մշակութունը նույն է, ինչ վոր կա-
ղամբի համար. այն է՝ աշնան վար, —նախապես
աղբած, զարնան կրկնավար և փոցխել, հետո
մարկյորներով շարքեր գծել, վորոնցով գութանը
անցնելով բացում է ակոսներ, ուր տնկվելու լեն
պամիդորի շիթիլները:

Կաղամբի պես, պամիդորի համար ևս ան-
հրաժեշտ է ունենալ շիթիլանոց, ուր նախապես
ցանում են պամիդորի սերմը, առատ ջրում,
ցրտից հասիրներով պաշտպանում, քաղհանում և
սեհրակացնում: Հենց վոր շիթիլները ճյուղավոր-
վում են, զգուշութեամբ հանում են ու, կաղամբի
պես, շարքերավ տնկում են հողի մեջ մինչև բուզը:
Պամիդորի շիթիլները նույնպես տնկում են մեկը
մյուսից 40—50 սանտիմետր հեռավորութեան վրա
և տնկելուց անմիջապես հետո ջրում են: Հայաս-
տանի տաք շրջաններում սերմը շիթիլանոցում
կարելի յե ցանել ապրիլի սկիզբներին, յերբ որերը
տաքացած կլինեն և ցրտահարութեան վտանգն
անցած: Վորքան առատ լինի շիթիլանոցի մեջ
ձիու աղբը — այնքան շուտ և փաթեամ կզարգանա
շիթիլը: Այսպես, ապրիլի 15 ին ցանած սերմից
մայիսի 10-ին շիթիլներն այնքան մեծացած են
լինում, վոր նրանց կարելի յե փոխադրել դաշտ:

ԹՈՒՄՐ ՅԵՎ ՅԱՐԻ.—Պամիդորի հետագա խըն-
ամքը կախված է մասամբ նրանից, թե, արդյոք
ուզում ենք այն թմբերի վրա մեծացնել, թե
առանց թմբերի—ձողերի վրա: Առաջին դեպքում
փուխրացման ժամանակ պամիդորի շար-
քերի ուղղությամբ 60—70 սանտիմ. լայության
թումբեր են կապում, յերբ միջնակները կուլ-
տիվատորներով մշակում են: Այդպիսով, ախոս-
ները դառնում են առվակներ, և շուրս անմիջա-
պես պամիդորների տակով չի հոսում, այլ
թմբերի միջով ծծվում է պամիդորի տակ. իսկ
յերբ մշակում ենք առանց թումբերի, այդ դեպ-
քում պամիդորն առանձին-առանձին թուփերը
հետագայում անհրաժեշտ է կապել հատուկ ձո-
ղերի, վորոնք տնկվում են յուրաքանչյուր թփի
կողքին: Ձողերը շինում են ամուր փայտից մի-
ջին հաշվով մի վերջուկ հաստությամբ $1\frac{1}{2}$ արշին
յերկարությամբ և խրում են թփերի մոտ, հետո,
յերբ պամիդորն սկսում է ծաղկել ու պտուղ
բռնել, նրա ճյուղերն ճլուպով կապում են այդ
ձողերից, վորով թույլ չեն տալիս, վոր պամի-
դորը պարկի հողի վրա, կեղտոտվի կամ փախի:
Այսպիսով, պամիդորները շուտ են հասնում և
մաքուր են մնում: Բացի դրանից գրեթե բերքի
90% -ը հեշտությամբ քաղվում ու շուկայի ապ-
րանք է դառնում: Այս յերկու ձևերից մեկն ու


մեկով մշակելու խնդիրը պետք լուծել հենց
սկզբից, վորպեսզի դրա համաձայն էլ տարվի
մշակությունը: Մի հեկտարին զնում է 15—18
հազար ձող: Ձողերը, լեթե ամուր փայտից
են, դիմանում են 3 տարի, և ամեն տարի
10—15% նորոգութություն պահանջում: Իրանց
հատը արժե 2—3 կոպեկ:

Թմբերի վրա մեծացվող պամիդորը թեև ա-
վելի բիշ ծախք է պահանջում, բայց բերքի
20% -ը փչանում է, մնում է չհասած և համեմա-
տաբար ավելի ուշ է հասնում և վերջին հաշվով
ավելի թանգ է նստում:

ԽՆՇՄՔԸ ՅԵՎ ՎՈՌՈՂՈՒՄ.—Շիթիները տնկե-
լուց 15 ուր հետո ամբողջ հողը ծածկվում է մո-
լախոտերով, վորի դեմ պահանջվում է լավ
քաղհան, և ամբողջ հողի փուխրացում:

Իրա համար անհրաժեշտ է 15 ուրը մի ան-
գամ կատարել քաղհան և հողը փուխրացնել:
Առաջին անգամ քաղհանում են ուրագներով, իսկ
հետևյալ անգամները ձեռքի կամ ձիաքարշ կուլ-
տիվատորներով, վորով աշխատանքը կրկնակի և
յեռակի եժանանում է: Կաղամբի պես պամի-
դորն ևս ամեն մի քաղհանից հետո պիտի շրել:
Ձուրը պետք է հոսի պամիդորների առվակների
միջով վոչ արագ, այլ հանդարտ, վորպեսզի խորը

ծծվի հողի մեջ: Լավ փուխրացրած հողին, նույն-
իսկ ամենաշոգ տեղերում ամառը 5-6 շուրը բուս-



Նկ. 5. Պամիդորը ձողին կապած:

րովին բավական է. ավելորդ ջրերը միայն ամրաց-
նում է է հողը և նպաստում մոլախոտերի բազ-
մանալուն: Ոգոստոսի վերջին պետք է տալ վեր-
ջին շուրը և թողնել, վոր պամիդորը հասնի՝ լավ
կարմրի:

ՌԻՃԵՐԻ ՎՈՉՆՉՆՅՈՒՄԸ.— Պամիդորը շուտ զար-
գացող և «յերեսը պինդ» բույս է: Հենց վոր
նա դառնում է յերեք ճյուղանի, սրանց
արանքներից հետզհետե զարգանում են նոր
ճյուղեր ու տերևներ. դրանք կոչվում են բիճեր:
Բիճերը բույսի բերքատվությունն ուշացնում են,
ուստի անհրաժեշտ է հենց սկզբից դրանց հե-
ռացնել՝ յեղունգով կամ սուր դանակով: Ամե-
նից լավ է պամիդորի թփի վրա թողնել 4—5
սկզբնական ճյուղ և այնուհետև դրանից դուրս
յեկած բիճերը նույնպես կտտորել: Թողած 4-5 ճյու-
ղերի վրա բռնած պամիդորներն ավելի խոշոր
են լինում, շուտ են հասնում—առանց վրասելու
բերքի քանակին:

Պամիդորի ծաղկելուց հետո, վորը տևում է
հունիսից մինչև ուշ աշուն, սկսվում է նրա
պտղակալումը: Հուլիսից յերևում են պամիդորի
դեռ կանաչ պտուղները, վորոնք այնուհետև
լցվում, խոշորանում են և ոգոստոսի մեջ ըսկ-
սում են հետզհետե կարմրել: Մա պամիդորի հաս-
նելու նշանն է:

ՐԵՐՔԻ ԺՈՂՈՎԵԼԸ.— Բերքը պետք է ժողո-
վել հենց վոր պամիդորը հավասարապես կար-
մրած է լինում: Թողնել, վորպեսզի պամիդորը
շատ հասնի—միտք չունի, քանի վոր այդ դեպ-
քում նա փափկում է և փոխադրության համար

դառնում անդիմացուն: Պամիրորի բերքը տևում է 1½ ամիս և վերջանում է ուշ աշնանը — սառնամանիքներն ընկնելիս, յերբ նրա թփերը սևանում են, իսկ դեռևս չհասած պտուղները սառչում և գորշ գույն են ստանում:

Պամիրորը առատաբերք բանջարապտուղ է. նրա մի հեկտարից, նայած տեսակին, ստացվում է 250—500 ցենտներ, վորի 80%—ը, յեթե միայն բույսն իր ժամանակին է տնկված, հասնում է և տալիս է լավ յեկամուտ: Ամենից ձեռնատու յե պտուղներն հետզհետե ժողովել, մաքրել ցեխից, յեթե կա, շոկել ըստ մեծության, գույնի ու տեսակի և հատուկ արկղների մեջ խնամքով դարսելուց հետո ուղարկել շուկա վաճառելու (Հայգյուղկոոպ): Պամիրորի չհասած կանաչ պտուղներն աշնանը ուշ կարելի յե քաղել և վաճառել — թթու դնելու համար: Այնպես վոր այդ կողմից ևս նրա վերջին մնացորդներն ունենում են շուկայի վորոշ արժեք:

ՏԵՍԱԿՆԵՐԸ.— Պամիրորի բազմաթիվ տեսակներից լավագույներին են «Շուսհասուկնեիի քազավոր» («король ранних»), «Թագավոր շուսբեք», «Միկադո» տեսակները: Հայաստանում պամիրորը շատ լավ հասնում է և առատ բերք է տալիս Յերևանի և Եջմիածնի դաշտավայրերում: Մանահնի ձորում, Իջևանի դաշտ-

յին շրջանում, Դարալագյազի, Ղափանի ձորերում և այլն: Նրանք բավարար կերպով հասնում են նաև մեր նախալեռնային գոտում, մանավանդ յեթե ցանված են արևելա-հարավային լանջերում և տնկված են: վաղահաս շիթիլներ:

4. Բ Ա Դ Ր Զ Ա Ն

Բադրջանը, պամիրորի պես, սիրում է տաք կլիմա, խորը փուխրացրած և լավ պարարտացրած հող, պայմանով, վոր նա վոռոգման ջրով ապահովված լինի: Մի հեկտարին բավական է 4—5 ֆունտ, կամ 2 կիլո սերմ:

Բադրջանի խնամքը, քաղհանելը, հողի փուխրացումը, ջրելը, տնկելու ձևը, շիթիլներ պատրաստելը նույնն է, ինչ և պամիրորինն ու կադամբինը, այն տարբերությամբ միայն, վոր նա ամուր ցողուն ունենալով, կարիք չունի վոճ բիհերի, վոճ պտուղները կապելու և վոճ էլ բիճերը պոկելու:

Լավ մշակված մի հեկտարի վրա տնկվում է 18—20 հազար շիթիլ. ամեն մի թուփը կարող է տալ միջին հաշվով 5—6 պտուղ կամ մոտ 100—120 հազար բադրջան, վորն անում է մոտավորապես 160—200 ցենտ. մթերք:

Նրա մշակության ծախքը 15—20%—ով պամիրորից էժան է նստում:

Բաղրջանի լավ տեսակներէց ե համարվում «Պարսկական» մույգ մանիշակագույն գույնով, յերկարավուն և չհաստացող տեսակը: Լավ ե նաե Յերևանի տեսակը:

5. ԲԱԶՈՒԿ ՅԵՎ ԳԱԶԱՐ

Արմատաբույսերից ամենից գործածականները բազուկի և գազարի այն տեսակներն են, վորոնք տարբեր յեղանակներով գործադրվում են մեր կերակուրների մեջ՝ կամ անմիջապես և կամ վորպես համեմներ:

ՀԱՂԸ.—Բոլոր բանջարեղեններից արմատաբույսերն ամենից ավելի կարիք ունեն խոր մշակված, փխրուն և լավ պարարտացրած ու աղբած հողերի: Վորպես պարարտանյութ գործադրվում ե մոխիրն ու փտած գոմաղբը: Վերջինն ավելի նպատակահարմար ե արտի վրա փռել աշնանից, վորից հետո հողը խորը վարող գութանով գութանում են ու թողնում մինչև գարուն, հետո փոցխում են, հավասարեցնում, մարկյորներով շարքերը նշում ու գութանով կամ չուխով ակոսներ բացում, վորոնց մեջ և շաղ են տալիս սերմը՝ մեկը-մյուսից յերկու-յերեք մատ կամ 5—7 սանտիմետր հեռավորությամբ և իսկույն ձնձյուղներով ջրում են:


ՅԵՆՔՆ ՈՒ ՄՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ.—Բազուկը գազարից 19 որով շուտ ե ծլում ու հողից դուրս գալիս, այն ինչ գազարը ծլում ե ցանքից 20 և ավելի որ հետո:

Հենց վոր բազուկի ծիւերն յերևացին, պետք ե քաղհանել բոլոր մուխոտերը, հողը փուխրացնել և բուզերը տալ, փուխր հողը մոտեցնելով նոր դուրս յեկած բազուկի և գազարի արմատներին:

Յերբ բազուկի ցանած ծիւերն այնքան մեծանում են, վոր բույսի արմատները 2—3 վերջով բոլ են ունենում, պետք ե բազուկը սեհրակացնել, դուրս քաշելով իրարու շատ մոտ բուսածներն այն հաշվով, վոր մեկից մինչև մյուս բույսը մնա 10—15 սանտիմետր տարածություն: Յերկրորդ քաղհանից և փուխրացումից հետո արտը պետք ե ջրել, անելով յերկրորդ սեհրակացումը, այս անգամ թողնելով մեկը մյուսից մոտ մի թիգ կամ 18—24 սանտիմետր տարածություն, իսկ շարքը-շարքից՝ բազուկի համար 50—60 սանտիմետր, գազարի համար՝ 30—40 սանտիմետր: Շարքերի մեջտեղից անցնելու յե այն առվակը, վորով ջրվելու յեն այս բույսերը: Ջրել պետք ե ամեն քաղհանից հետո: Ամառվա ընթացքում պետք ե ջրել 5—6 անգամ և նույնքան անգամ ել մարգերը քաղհանել և հողը փուխրացնել:

ՏՆՆԵԼԸ ՅԻԹԻՆՆԵՐՈՎ ՅԵՎ ԽՆԸՄՔԸ.—ՅԵԹԵ
 ցանկանում յեն ստանալ շուտ հասնող մթերք—
 ցանքը պիտի կատարենք վոչ թե անմիջապես
 մարգերում կամ արտի մեջ, այլ նախապես—
 ապրիլի մեջ պիտի պատրաստել հատուկ շիթի-
 լանոց, վորտեղից 3—4 վերջուկ հողից բարձրացած
 շիթիլները պետք է տեղափոխել իրենց մշտական
 տեղը—տնկելով մեկը-մյուսից 12—18 սանտի-
 մետր հեռավորության վրա: Տնկելու այս յեղա-
 նակը կատարվում է այսպես. լավ փուխրացրած
 արտի մի գլխից մինչև մյուսը կապում են հաստ
 թել կամ բարակ պարան. նրա ուղղությամբ մի
 բանվոր 10 սանտիմետր հաստության, ծալըը սրած
 փայտի բիրով քսան-քսան սանտիմետր իրարից
 հեռու 18—22 սանտիմետր խորությամբ փոսեր
 է բացում. նրա յետևից գնացող մի այլ բանվոր
 շիթիլանոցից հանած բազուկի կամ գազարի շի-
 թիլները տնկում է այդ փոսերի մեջ և հողը
 թեթև հուպ տալիս շուրջն ու անցնում: Յերբ
 առաջին շաբթը պատրաստ է, թելը փոխադրում
 են յերկրորդ շաբթը՝ 25 սանտ. առաջինից հեռու և,
 ինարկե, առաջինին զուգահեռ: Նույն աշխատան-
 քը, ինչպես և առաջին շաբթի համար էր, կատարում
 են յերկրորդ շաբթում, հետո դարձյալ տեղափո-
 խում են պարանը՝ 25 սանտիմետրի վրա և սկսում
 են նույն կերպ տնկել յերրորդ շաբթը:

Այսպես յերեք շաբթ տնկելուց հետո սկսում



Նկ. № 6. Նանտի գազար:

են չորրորդ շարքը, սրա հեռավորութունը յեր-
րորդից անում են վոչ թե 25 սանտիմետր, այլ
50 սանտիմետր, այսինքն՝ յերկու անգամ լայն:
Յերրորդ շարքը տնկելուց հետո նորից 25 սան-
տիմետրի վրա անում են հինգերորդ և վեցերորդ
շարքերը: Յոթերորդ շարքը անում են վեցերոր-
դից դարձյալ կես մետրի վրա, ութերորդը նույն-
քան, իններորդը նույնքան, իսկ տասներորդի հա-
մար նորից 25 սանտ. և այսպես ամեն մի յերեք
10 սանտ. շարքից հետո թողնում են կես
մետրանոց լայն շարքեր, վորով ստացվում է
շարքերի ժապավեն:

Այս յեղանակով տնկելն այն առավելու-
թյունն ունի, վոր ավելի հեշտ է լինում թե
քաղհանելն ու փուխրացնելը և թե ջրելն ու ավ
աշխատանքներ կատարելը:

Այստեղ ևս քաղհանն ու փուխրացումը պետք
է անել տնկելուց հետո մինչև բերքը ժողովելը՝
5—6 անգամ և ջրել 4—5 անգամ:

Վորքան արտը լավ է քաղհանած ու փուխ-
րացրած, այնքան բույսերը ջրելու քիչ կարիք
են զգում և լավ բ՛րք են տալիս:

ԲԵՐՔԻ ԺՈՂՈՎԵԼԸ.—Բազուկի և գազարի բեր-
քի ժողովելը սկսվում է ոգոստոսի վերջերին և
սեպտեմբերի մեջ: Հողից նրանց հանում են բա-
հերով՝ շատ զգուշությամբ, վորպեսզի նրանց ար-

մասները չվնասեն: Ժողովելով բերքը, մաքրում են
հողից, ցեխից և ապա 2—3 որով բարակ շեր-
տով փռում են արևի տակ, վոր ցամաքի, վո-
րից հետո կամ անմիջապես շուկա յե ուղարկ-
վում՝ վաճառելու համար, կամ թե պահում են
չոր նկուղներում՝ ձմեռը հետզհետե շուկա հա-
նելու համար:

Լավ մշակված մի հեկտար հողամասից
ստացվում է բազուկ՝ 170—200 ցենտներ, գա-
զար՝ 150—170 ցենտներ:

ՏԵՍԱԿՆԵՐԸ.—Բազուկի սեղանի տեսակներից
ամենից լավերը համարվում են «ԵՐՇՈՒՐՏԻ»
մույզ կապույտ յերկարավուն և «ՅԵՂԻՍԱԿԱՆՆԸ»
նույն գույնի, բայց կոլոր և գնդաձև: Դազարի
տեսակներից լավագույններն են՝ «ԲՐԱՈՒՆԵՎԵյ-
ՂԻՆՆԸ» յերկարավուն, Նանսի կարճը, բաց կար-
մրագույնը և Դավիդովսկի ու Վորոբյովսկի՝
յերկարավուն տեսակները:

ՏԵՐԵՎՆԵՐԻ ՈԳՏԵԳՈՐԺՈՒՄԸ.—Բացի արմատ-
ներից, վորոնք հասնում են աշնան սկզբին, կե-
րակրի մեջ գործածվում են նաև բազուկի տե-
րևներն ու ցողունը: Վերջինս կարելի յե նաև
չորացնել, 15—20 որ պահելով արևի տակ, նա-
խապես հեռացնելով տերևները և կոտորելով
2—3 սանտիմետր: Չորացրած ցողունները զցում
են կերակրի մեջ, պատրաստում են սալաթ, աղը

դնում և այլն, իսկ թարմ տերևները տալիս են կովերին և մյուս անասուններին— չեղներին, ձիերին, հորթերին և այլն, վորոնք մեծ հաճույքով ուտում են:

6. Ս Ո Ւ Ն

ՏԵՍԱԿՆԵՐԸ.— Սոխի բազմաթիվ տեսակներից ամենից արժեքավորները նրանք են, վորոնք տալիս են խոշոր գլուխներ, քաղցրահամ են և ունեն վորոշ կծվություն: Շատ կծու սոխը շուկայում հարգի չէ: Նշանակություն ունի նաև սոխի ձևը՝ կոլոր, քիչ տափակ սոխը, գերադասելի յե յերկարավունից, բաց կարմրավուն կեղեվով՝ սպիտակ կեղևավորից: Սոխի գլուխները պետք է լինեն վոչ շատ մանր և վոչ էլ շատ խոշոր. այս վերջինները շուտ են ծլում ու նեխում:

Անդրկովկասում մշակվող սոխի տեսակներից լավ են համարվում Հայաստանում՝ Ղարխունի տեսակը, Գանձակի և Ղարայդի սոխը, վորպես և Շարուրի պարսկական (Պոլի) տեսակները:

ՀՈՂԸ ՅԵՎ ՊԵՐՍԻՏԵՑՈՒՄԸ.— Սոխը սիրում է ավազոտ տղմահող, կավաավազային փոխոր կամ ավազակավային խոր շերտով հողեր, տաք կլիմա, շատ ջուր և չոր յեղանակ: Պարարտանյութերից մոխիրն ամենից ավելի յե հարմարվում

սոխին. նա խլում է սոխից նրա կծվությունը և տալիս է դիմացկանություն: Վորպես պարարտացում, հեկտարին 16—18 ցենտ. մոխիրը բավական է: Սոխը չի սիրում թարմ գոմաղբ, վորը նրան փտեցնում է և ձմեռը պահելու համար դարձնում է փակուկ և անդիմացկուն:

Հողի մշակությունը նույնն է, ինչ վոր բացուկինը:

ՍԵՐՄ ՅԵՎ ՅԻԹԻՆՆԵՐ.— Շիթիլանոցում պատրաստած և շիթիլներով անկած սոխն ավելի մեծ բերք է տալիս, քան անմիջապես արտի մեջ ցանածը. նույնն է և շարքացանքը: Շարքացան սոխն ավելի քիչ մշակություն է պահանջում, քան շաղացանը: Վերջին դեպքում հեկտարին դնում է մոտ 30 կիլո սերմ, այնինչ շարքացանի դեպքում՝ 15 կիլոն էլ բավական է:

Սոխը ծելու համար յիրկար ժամանակ է պահանջում, ուտի, նախքան ցանելը, սերմը քսակի մեջ ածելով՝ դնում են խոնավ տեղ, ուր և նա ծլում է: Բսածի վրա որը մի անգամ ջուր պիտի ածել, վոր չցամաքի և ապա 5—6 որից հետո ցանել: Այդ միջոցին սոխը ուռչում է, սև սերմի ծայրերին յերևում են սպիտակ ծիլեր, կծու հոտ է արձակում և հիմա յե, վոր նա ցանելու համար պատրաստ է:

Սոխը պետք է ցանել, յերբ յեղանակները

բավականաչափ տաքանում են ու ցրտահարութեան վտանգն անցած է.—այն է՝ ապրիլի վերջերին և կամ մայիսի սկիզբներին:

Շիթիներով ցանելիս պետք է վարվել ճիշտ այնպես, ինչպես բազուկն ու գազարն ենք տնկում: Շարքացան մեքենայով ցանելիս կարելի յե միանգամից ցանել յերեք-չորս շարք, բաց թողնելով կես մետր տարածությամբ մի շերտ:

ԽՆՇՄՔՆ ՈՒ ՎՈՌՈՒՊՈՒՄԸ.—Սոխը, ինչպես արդեն ասվեց, սիրում է պարարտ, բայց թեթև հող, ուստի վոչ մի կերպ չպետք է թոնել, վոր հողի յերեսը կեղև կապի և կամ արտի վրա մնան չբաղհանված մոլախոտեր: Արանքների և միջնակների փուխբացումը ձեռքի կուլտիվատորներով կամ թոխիներով՝ սոխի լավ զարգացման և առատ բերքատվության առաջին պայմանն է: Սոխը պետք է ջրել ամեն ամեն քաղհանից հետո, բայց վոչ այնքան, վոր ջուրը ճահճանա, այլ նա պետք է միջակ արագությամբ հոսի սոխի միջանցքների միջով: Ոգոստոսի կեսերից պետք է դադարեցնել սոխի վոռոգումը, վորովհետև այդ ժամանակ սոխը գլուխ է բռնում և ջուրը կարող է նրան փլասել, առաջ բերել սնլային հիվանդություններ:

Սկսած հուլիսից սոխ—նրա կանաչ գոխերն այնքան են մեծացած լինում, վոր սեհրա-

կացնելիս մեկ ու մեջ անում են այդպիսի սոխերն իրենց մանր գլուխներով ու շուկա տանում ծախելու: Սեհրակացումը պետք է կատարել այն խաշվով, վորպեսզի—սոխից-սոխ մնա առառավելն 22-25 սանտիմետր տարածություն:

ԲԵՐՔԸ.—Սոխը հասնում է սեպտեմբերին—հոկտեմբերին, յերբ գոխերը սկսում են թառամության նշաններ ցույց տալ: Այդ ժամանակ արդեն պետք է բահերով սոխը հանել հողից, մաքրել ցեխից և փռել արևի տակ 10—12 որ, վորպեսզի դրսից ցամաքի, կեղևն ու նրա շապիկը չորանան, հակառակ դեպքում՝ թաց սոխը լիկում է, շուտ փչանում և ձմրանը չի դիմանում: Այսպես չորացնելուց հետո սոխը պետք է տանել չոր նկուղ և իրար վրա մոտ՝ 40 - 50 սանտիմետր հաստության շեղջեր կազմել ու պահել:

Մի հեկտարից ստավցում է 130—170 ցենտներ սոխ, վորի ցենտները շուկայում վաճառվում է 4 ուրբուց մինչև 5 ուրբի: Ի՞նչ չեն դեպքեր, յերբ լավ մշակած ու խնամված մի հեկտարից ստացվել է 400 - 450 ցենտներ սոխ:

ՀԻՎԱՆՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳԵՄ ԿՈՎԵԼԸ.— Ոգոստոսին սոխի վրա—նրա կանաչ մասերում յերևում են զանազան փլասատուներ, վորոնք սպիտակ ալյուրի պես ծածկում են այդ մա-

ուերը և քնասում սոխին: Դրանք մանր միջատ-
ներ են, վորոնց դեմ կարելի յե կովել ծծումբ
սկսկելով՝ յերկու անգամ—հունիսին և հուլիսի
վերջերին:

7. Վ Ա Ր Ո Ւ Ն Ք

ՀՈՂԸ.—Բանջարանոցային բույսերի և պտուղ-
ների միջև վարունգը ամենից ընդունվածն ու
սիրելին է: Լավ կանաչ, բարակ և փշոտ, ծե-
րին ծաղիկ, փուխը վարունգներով պարծենում
է ամեն մի բանջարաբույժ: Նա հաճելի յե և
ոգտակար թե թարմ ժամանակ և թե վորպես
պահածո՝ աղի կամ քացախի մեջ պատրաստած:
Սրամանր և հատուկ տեսակները շատ գործածելի
յեն և «պիկուլի» անվամբ շուկայում պահա-
ծողների մեջ հարգի յեն: Վարունգը միա-
նման աշողությամբ բուսնում է թե տաք կլի-
մայում և թե բարեխառն ու ցուտ տեղերում,
պայմանով վոր նրան հատկացված լինի թարմ, հա-
բուստ հող, քամիներից պաշտպանված ու ըստ-
վերուտ տեղ և արևի անմիջական ազդեցու-
թյունից ազատ: Մաքուր ջուրը—մանավանդ
համեղ ու սառնորակ աղբյուրաջուրը վարունգ-
ներին տալիս է առանձին փուխրությունն ու
քնքշություն: Խամ կամ խամացած չմոտ հողե-

րում վարունգը զարգանում է ամենից լավ: Երբ
անդալուսին չկա—թարմ ու լավ աղբած հողը կա-
րող է նրան փոխարինել:

ՅԱՆՔԸ.—Վարունգը լավ արդյունք է տալիս,
յերբ ցանում են 2 կամ 3 տարեկան սերմեր:
Վարունգի սերմը ցանում են մեկը մյուսից
40 սանտիմետրի վրա շարքերի մեջ՝ թմբերի
վրա, 4—6 սանտիմետր խորության փոսերում՝
յերկու-յերկու հատ: Դրանից հետո փուխը հողով
ծածկում են, թեթև ջրում և սպասում մինչև
նրա ծլելը: Ապրիլին ցանած վարունգի սերմը
մեկը ու տաք յեղանակում արդեն մի տաս որից
հետո ծլում է: Հենց վոր յերևաց յերրորդ տե-
րևը, վարունգի բուգը պետք է լցնել—այսինքն
մինչև տերևները հող կիտել շուրջը—բացելով
նրա շուրջ մի փոս, ուր ձնձյուղով ջուր են ա-
ծում, կամ թմբի տակ գնացող առվակով ջուր
բաց թողնում: Դրանից հետո յե, վոր պետք է
քաղհանել բոլոր մուխիտերը, հողը բահերով
կամ կուլտիվատորներով փուխրացնել ու 7—8
որը մի անգամ առատ ջրել:

Ծիլը դուրս գալուց մի ամիս անց, վարուն-
գի թուփը մեծանում, ճյուղավորվում է, և չան-
ցած 15 որ յերևում են դեղնագույն ծաղիկ-
ները, վորոնցից առաջանում է նրա պտուղը:
Սա տաս որվա մեջ այնքան մեծացած է լինում,

վոր կարելի չե գործ ածել և հետզհետե ժողովելով՝ շուկա հանել: Խնամելու ժամանակ պետք է ուշք դարձնել, վոր թաղերը իրարու հետ չխճճվեն, վոր վարունգը գտնվի ստվերի մեջ, թփի տակ և վոչ մի դեպքում արևի տաք ճառագայթների տակ, վորից նա դառնանում է, ծովում ու իր յերկարավուն գեղեցիկ տեսքն ու մուգ կանաչ գույնը կորցնում է:

Յերբ թաղը շատ փարթամ է և պտղակալումն ուշանում է, լավ է վարունգի թփի ճյուղերի ծայրերը 3—5 սանտիմետր յերկարութամբ յեղունգով կտրել: Իրանից խոշորանում են նրան ծածկող տերևները, իսկ ինքը, պտուղը ավելի չե յերկարանում ու հյութալի դառնում: Առատ ու հաճախ՝ շաբաթը մի անգամ՝ վունգելը վարունգների աճող զարգացման գլխավոր պայմանն է, միայն թե ջրելիս չպիտի կպչել նրա թաղերին ու տերևներին, չվիրավորել դրանց, վորից վնասվում են վարունգները, ծովում և շատ անգամ դառնանում են:

Վարունգը, յեթե թարմ ուտելու համար է, պետք է ժողովել, քանի դեռ նրա միջի սերմերը չեն մեծացել, այլ գրեթե աննկատելի յեն ու փխրուն: Լավ է ժողովել առավորերը կանուխ—արևը ծագելուց առաջ և իսկույն շուկա ուղարկել քանի դեռ թարմ է ու չե թառամել նրա

կանաչ կեղևը: Քաղելիս ևս պետք է ուշ պտկել կամ կտրել սուր դանակով, և ստելով, վորչափ հնարավոր է, քիչ կպչել թաղերին ու տերևներին:

ԲԵՐՔ. — Մի հեկտար տարածությունից ըստ տացվում է 20—30 հազար վարունգ: Լավ տեսակներից ամենից ընտիր վարունգները պետք է թողնել թփի վրա, վոր հասնեն—դեղին գույն ստանան: Իրանցից է, վոր ստացվում է լավ սերմացուներ:

Մի վարունգի մեջ կա 100—120 սերմ: Սա պետք է ժողովել, լավ մաքրել, հով ու ստվերոտ տեղում չորացնել, լցնել մանր քսակների մեջ և պահել այնպիսի տեղ, ուր մկները չկան: Յերկրորդ տարում այսպես ընտրած և պահված վարունգի սերմացուն ամենից հաստատուն բերքըն է տալիս, յեթե միայն մշակությունն ու հողը չեղել են հարմար:

ՏԵՄԱՆԵՐ. — Ուտելու, ինչպես և թթու և այլ դնելու համար լավագույն տեսակներն են Անդրկովկասում—Հայաստանում՝ Ախտայի գավառակի Բժնի վարունգը, Վրաստանում՝ Մուխրանի և Ազրբեջանում Բանանցի և Ղուսարի վարունգը: Սրանք մուգ կանաչ գույնի են, յերկարավուն ու շատ փուխր ու քնքույր:

«Պիկուլիի» համար մշակվում են վարունգի հատուկ մանր տեսակները:

վոր կարելի չե գործածել և հետզհետե ժողովելով՝ շուկա հանել: Խնամելու ժամանակ պետք է ուշք դարձնել, վոր թաղերը իրարու հետ չխճճվեն, վոր վարունգը գտնվի սովերի մեջ, թփի տակ և վոչ մի դեպքում արևի տաք ճառագայթների տակ, վորից նա դառնանում է, ծովում ու իր յերկարավուն գեղեցիկ տեսքն ու մուգ կանաչ գույնը կորցնում է:

Յերբ թաղը շատ փարթամ է և պտղակալումն ուշանում է, լավ է վարունգի թփի ճյուղերի ծայրերը 3—5 սանտիմետր յերկարութամբ յեղունգով կտրել: Դրանից խոշորանում են նրան ծածկող տերևները, իսկ ինքը, պտուղը ավելի չե յերկարանում ու հյութալի դառնում: Առատ ու հաճախ՝ շաքաթը մի անգամ՝ վոռնգելը վարունգների աճող զարգացման գլխավոր պայմանն է, միայն թե ջրելիս չպիտի կպչել նրա թաղերին ու տերևներին, չվիրավորել դրանց, վորից վնասվում են վարունգները, ծովավում և շատ անգամ դառնանում են:

Վարունգը, յեթե թարմ ուտելու համար է, պետք է ժողովել, քանի դեռ նրա միջի սերմերը չեն մեծացել, այլ գրեթե աննկատելի յեն ու փխրուն: Լավ է ժողովել առավոտրերը կանուխ—արևը ծագելուց առաջ և իսկույն շուկա ուղարկել քանի դեռ թարմ է ու չե թառամել նրա

կանաչ կեղևը: Քաղելիս ևս պետք է զգուշ պուկել կամ կտրել սուր դանակով, աշխատելով, վորչափ հնարավոր է, քիչ կպչել թաղերին ու տերևներին:

Բերք. — Մի հեկտար տարածությունից ըստ տացվում է 20—30 հազար վարունգ: Լավ տեսակներից ամենից ընտիր վարունգները պետք է թողնել թփի վրա, վոր հասնեն—դեղին գույն ստանան: Դրանցից է, վոր ստացվում է լավ սերմացուներ:

Մի վարունգի մեջ կա 100—120 սերմ: Սա պետք է ժողովել, լավ մաքրել, հով ու սովերոտ տեղում չորացնել, լցնել մանր քսակների մեջ և պահել այնպիսի տեղ, ուր մկները չկան: Յերկրորդ տարում այսպես ընտրած և պահված վարունգի սերմացուն ամենից հաստատուն բերքն է տալիս, յեթե միայն մշակությունն ու հողը յեղել են հարմար:

Տեսակներ. — Ուտելու, ինչպես և թթու և աղը դնելու համար լավագույն տեսակներն են Անդրկովկասում—Հայաստանում՝ Ախտալի գավառակի Բժնիի վարունգը, Վրաստանում՝ Մուխրանի և Ադրբեջանում Բանանցի և Ղուսարի վարունգը: Մրանք մուգ կանաչ գույնի են, յերկարավուն ու շատ փուխր ու քնքուշ:

«Պիկուլի» համար մշակվում են վարունգի հատուկ մանր տեսակները:

Յ Դ Դ Ո Ւ Մ

ՅԸՆՆԵԼՈՒ ՑԵՂԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԿԸ.— Բանջարապտուղների մեջ դդումն ամենից քիչ պահանջկոտ բույսն է: Հազվագեպ է, վոր դդումը ցանեն հեկտարներով, այլ մեծ մասամբ ցանում են բանջարանոցների այն հողամասերի վրա, ուր ուրիշ բանջարներ չեն բուսցվում, — դա բանջարանոցի յեզրերն են, պատատեղերը, քարաշեղջերի մեջ:

Դդումը տաք կլիմա յե սիրում, արև ու ջուր: Բավական է, վոր լինի պարարտ, թեև անհարմար հող, և դդումն այնտեղ կգարգանա նույնպիսի աջողությամբ, ինչպես և բաց դաշտում:

ՅԸՆՔՆ ՈՒ ԽՆՇՄՔԸ.— Սերմը ցանում են 24 ժամ թրջոց դնելուց հետո լայն փոսի մեջ, ուր պետք է ածել մոտ մի բահ փտած աղբ, ծածկել յերկու մատի հաստության հողով և ջրել: Չանցած մի շաբաթ, դդումը դուրս է գալիս և ընդամենը մի ամսում իր լայն տերևներով ծածկում է շուրջը գտնված 2—3 մետր տարածութուն: Դրա համար էլ ամեն մի քառակուսի մետրի վրա մի դդմասերմը բավական է, վորպեսզի նրա թաղերը դնան և, տարածվելով մի բանի մետր հեռավորության վրա, բռնեն ամբողջ հողամասը:

Քաղհանել պետք է դդումի շուրջ գտնված հողերը և այն էլ ընդամենը 2—3 անգամ, վորից հետո դդումի թփերը իրենք կբռնեն այդ տեղերը և կխեղդեն մոլախոտերին:

ԲԵՐՔԸ.— Դդումը հասնում է ոգոստոսից մինչև հոկտեմբեր: Յեթե թաղի վրա շատ դդումներ կան, պետք է առաջացած մանր դդումները կտրել, վորպեսզի մնացածները շուտ մեծանան. նույնը պետք է անել թաղի ծայրերից անըստ հատ դուրս յեկող նոր շուղերի վերաբերմամբ: Վորպեսզի դդումը լավ հասնի, նրան պետք է վերջին շրջանում հանել ստվերից և արևի տակ գցել ու առատորեն ջրել: Մի հեկտարից ստացվում 1500-2000 հատ դդում, վորը, յեթե խոշոր տեսակիցն է, կշռում է 200—220 ցենտներ:

Վորովհետև դդումի պահանջը մեծ չէ, այսինչ ընտանիքի պարենավորման համար նա լավ կերակուր է, ուստի չարժի դդումով զբաղեցնել հեկտարներ, այլ, ինչպես արդեն ասվեց, այն կարելի չէ ցանել բանջարանոցի բոլոր չոզտագործված տեղերում — յեթե միայն նա չի խանգարի մյուս բանջարներին:

Բերքը ժողովելուց հետո լավ է մի քան որ դդումը դնել արևի տակ, վորպեսզի նա ցամաքի, կեղևը ավելի ամրանա, և ձմեռը լավ դիմանա:

9. ԼՈՐԻ ՅԵՎ ՍԻՍԵՌ

Հայաստանում կան շրջաններ, ուր լոբին վաղուց ի վեր բանջարանոցից անցել է դաշտ և դարձել է շատ ընդունված ու լեկամտաբեր դաշաային մշակույթ: Կոտայքի գավառակի գրեթե բոլոր գյուղերում լոբին մշակվում է մեծ մասամբ գաշտերում. նույնը ավելի նվազ չափով արվում է Բարանայի գավառում, Մանահնի ձորում, Ղափանի մի շարք գյուղերում:

Նկատի ունենալով լոբու և նրա հետ նաև սիսեռի մի այլ հասկություն, վոր նրանք պատկանում են հողը հարստացնող բույսերի ընտանիքին, նաև այն, վոր նրանք պահանջկոտ չեն պամիզորի ու կաղամբի պես և հավասար աջողությամբ բուսնում են մեր թե տաք և թե նախալեռնային գոտիներում—դրանց մշակությունն ու լայն տարածումը պետք է համարել շատ ցանկալի, մանավանդ կոլանտեսությունների ցանքաշրջանի մեջ:

ՀՈՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ.—Լոբին սիրում է խորը սևահող և շուտ-շուտ վռոռգել: Քարքրոտ տեղերը—յեթե միայն հողը մշակված է, չի արգելում լոբու լավ զարգանալուն, ուստի այդպիսի հողերը, յեթե միայն ունեն մշտական ջուր, կարող են հատկացվել լոբու և սիսեռի մշակության համար:

Ամենից լավ³ լոբու շարքացանքսը՝ թմբելի վրա—մեկը մյուսից ³/₄ արշին հեռավորությամբ, իսկ շարքը-շարքից՝ մեկ մետր, պայմանով, վոր շարքերի միջից անցնի վռոռգելու ջուրը:

Ցանել պետք է ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբին, յերբ սառնամանիքի վտանգը բոլորովին անցած կլինի:

Ծլելը արագացնելու համար 2—3 որ թրջոց են դնում և ապա շարքով աղոսների մեջ սերմում՝ յերկու-յերկու հատ ու յերկու մատ հողով ծածկում:

Մի շաբաթից թե լոբին և թե սիսեռը ծում են, արագ զարգանում և մի ամսից իրենց տակ սովեր են առաջացնում:

ՏԵՍԵԿՆԵՐ.—Լոբու և սիսեռի տեսակները շատ են: Լոբու յերկու տեսակից՝ թփավոր և բարձրացող—կարելի չե ընտրել այն տեսակը, վորի համար հիշյալ շրջանուն այս կամ այն հարժուրությունները կան. այսպես, որինակ, յեթե շրջանը անտառին մոտ է, կամ ծառատունկեր կան և հեշտ է լոբաձողիկներ ձեռք բերել—այն տեղերում ձեռնատու յե ցանել բարձրացող լոբին, վորի բերքատվությունն սովելի յերկարատև է, իսկ յեթե շրջագայբում կամ գյուղում ու անտեսության մեջ փայտեղենի պակասություն է զգացվում, այդտեղ ավելի ձեռնատու յե թփալոբ⁴ և

սխեռը: Առաջինների համար, վորպեսզի նրանք հենվեն ու փաթաթվեն, ձողիկները տնկվում են լոբու մոտ—արմատից 10—15 սանտիմետր հեռավորութան վրա: Ձողերը պիտի լինեն յերեք արշին յերկարութան և 3-4 սանտիմետր հաստութան: Արդեն յերկրորդ ամսին ծաղկելուց առաջ, լոբին փաթաթվում է այդ ձողին և ծաղկելով, սկսում է տալ իր կանաչ պտուղը:

ԲԵՐՔԻ ՓՈՂՈՎԵԼԸ.—Նույն ժամանակին, միայն առանց ձողերի, թփակալում են թուփ լոբին և սխեռը:

Լոբին գործ են ածում թե կանաչ և թե հասած դրությամբ. վերջին դեպքում գործ են ածում նրա հունդերը:

Լոբու ծաղկելն ու բերքատու թյունը տևում է յերկու ու կես ամիս, յեթե միայն նա տաս որը մի անգամ ջրվում է: Կանաչ և դալար քաղած լոբին պետք է նույն որը շուկա տանել, իսկ յեթե անային գործածութան համար է, մանր կտտորել ու մի ստվեր, բայց տաք տեղ մաքուր խսիրների վրա փռել՝ չորացնելու համար:

Յերբ ուզում են լոբու միջուկը—նրա հունդերը ժողովել, այդ դեպքում թողնում են մինչև վոր նա լավ հասնի, կճեպ կապի, ամբանա ու

հետո միայն ժողովում են և կալսում, կամ արորում, վորի հետևանքով հունդերը՝ լոբին կամ սխեռը կճեպից դուրս են գալիս: Քամհարելուց հետո մաքրում են լոբին, 3—4 որ արևի տակ փռում, չորացնում, ապա, ածելով քսակների մեջ, պահում են կամ շուկա հանում:

ԲԵՐՔԸ.—Մի հեկտար ցանած լոբին կաա 50—58 ցենտներ կանաչ լոբի և մոտ 16 ցենտներ չոր. նույն քանակությամբ ել ստացվում է չոր սխեռ:

Բերքը ժողովելուց հետո լոբու ձողերը պետք է ժողովել, ծայրերը մաքրել ցեխից, չորացնել և կապելով պահել մի չոր ծածկի տակ հաջորդ տարվա համար: Լավ պահված ամուր փայտի ձողիկները կարող են ծառայել 3—4 տարի՝ տարեկան 10—15% կորուստ ունենալով:

10. ԿԱՆԱՉԵՂԵՆ

Կանաչեղեն են կոչվում բանջարների մյուս բազմաթիվ տեսակները—խոպանախը, համեմը, մաղդանոսը, սամիթը, ամսական բողկը, նեխուրը, թարխունը և այլն, վորոնք չեն մշակվում մեծ տարածութունների վրա, այլ տներին կից բան-

Չարանոցներում կամ այգիների ու պարտեզների մեջ:

Դրանց, ինչպես նաև ձմրան բողկի, գետնախնձորի մասին մենք այստեղ չենք խոսում, վորովհետև դրանից շատերի մշակութունը շատ պարզ է, ուստի և կարոտ չե մանրամասն նկարագրության:

Այսքանը միայն կավեյացիներ, վոր ժողովուրդի սննդի համար այդ բոլոր բանջարները շատ ոգտակար են, նրանք, վորպես հոտավետ համեմներ, համ ու հոտ են տալիս կերակուրներին և հեշտացնում ու նպաստում են վոր կերակուրները ախորժակով ուտվեն և մարսվեն:

Թորն ու խնամքով, դեռ աշնանից վարած կամ բահած հողը, յեթե մանավանդ նա նախապես աղբվում է ստանը և տնտեսության մեջ ժողոված ու փտած կամ կիսափտած աղբով,—այդ բոլոր կանաչեղենների ու բանջարների հաջող մշակության ու բերքատվության գլխավոր պայմանն է:

Պետք է միայն հոգ տանել, վոր ամեն մի բանջարանոց սպահովված լինի ջրով:

Աշնանից վարած կամ բահած հողը վաղ գարնանը վարելն ու փոցխելը և, վոր գլխավորն է, ցանելուց հետո նրանց քաղհանելն աջողության մյուս գլխավոր պայմանն է:

Կանաչեղեններ ցանողը պետք է լավորակ սերմ ընտրի և ցանելուց հետո խնամքով փուխրացնի հողը, բույսերի բողազները լցնի և, վոր գլխավորն է, ցանկապատով կամ ուրիշ յեղանակով պաշտպանի բանջարանոցը, վորպեսզի անասուններն ու թռչունները չարածեն, վտանատակ չտան և ալին:

Լավ խնամված բանջարանոցի $\frac{1}{4}$ հեկտարը կարող է տիրոջը տալ 100—150 ոււրլի գուտ արդյունք, իսկ յեթե նա մեծ քաղաքներին մոտ է և արտահանվում է շուկա—կտա նույնիսկ 300 ոււրլու մի գումար, վոր մեր գյուղացու բյուջեյում աչքի ընկնող նշանակութուն կարող է ունենալ:

Տնտեսության մեջ գտնված բոլոր ազատ ձեռքերը՝ կին, յերեխա, ծերունի կարող են բանջարանոցում գտնել ամենաձեռնտու աշխատանք: Յեթե տնտեսութունը չունի ազատ ձեռքեր, վորոնք հոգ տանեն բանջարանոցին, այդ դեպքում ավելի լավ է բոլորովին չձեռնարկել բանջարանոց պահելու, վորովհետև միևնույն է, այդպիսի բանջարոնցից վոչ մի յեկամուտ ու արդյունք չի կարելի սպասել:

11. ԲԱՆՉԱՐԵՂԵՆԻ ՎԱՃԱՌԵԼԸ

Արդյունաբերական—այսինքն ծախելու նը-
պատակով կազմակերպվող բանջարանոցների
միջերջները, յեթե մանավանդ դրանք պատկա-
նում են կուլանտեսություններին, կարող են ա-
մենից լավ վաճառվել, յերբ բանջարանոցի տե-
րերն առաջուց պայմանավորվում են Հայգյուղկո-
ոպի Վարչության հետ: Այդ դեպքում Հայգյուղ-
կոպը բանջարանոցտերերին կարող է տալ վորոշ
գումար, վորպես կանխավճար (կոնտրակտացիա)
ի դիմաց իրան տրվելիք բանջարների: Պայմա-
նավորվողն այդ գումարը գործադրելու յե բան-
ջարանոցի կազմակերպման ծախքերի վրա: Բացի
դրանից, նույն Հայգյուղկոպը կամ հենց մեր
Սպառկոոպերացիան՝ ի դեմս բանկոոպների վար-
չության կարող է իր հետ պայմանավորված ան-
ձին կամ կազմակերպությանը բաց թողնել Գյուղ-
բանկի միջոցով, կամ հենց ինքը՝ բանջարի սեր-
մեր, գործիքներ, մեքենաներ, բուժելու դեղեր,
ամանեղեններ, կողովներ, արկղներ, և այլն:

Ամենից լավ է, յեթե վորոշ շրջանի կամ
գյուղի բանջարաբույծները միանան և կազմեն
«բանջարաբույծների արտադրական ընկերու-
թյուն» կամ «արտել»: այդ դեպքում թե միջերջ-

ների սպառումը և թե վարկերի—դրամների
ստացումը կլինի ամեն կողմից ապահովված:

Բանջարաբուծական խոշոր ընկերություն-
ները կարող են ունենալ իրենց մասնագետ բան-
ջարաբույծ-հրահանգիչ, վորի ցուցմունքներով
ուղեկավարությամբ կկատարվի ընկերության
անդամների բանջարանոցների բոլոր պատասխա-
նատու աշխատանքները:

Հիշելու յե, վոր խելացի դրված, լավ կազ-
մակերպված բանջարաբուծությունը գյուղատն-
տեսության ամենից շահավետ և հետաքրքիր
ձեռնարկությունն է, մանավանդ, յերբ դրա հետ
կապված է նաև բանջարանոցային սերմնարուծու-
թյունը:



Ց Ա Ն Կ

	Եջ
1. Յերկու խոսք	3
2. Նախապայմաններ	5
3. Կարտոֆիլ	6
4. Կաղամբ	15
5. Պամիկոր	22
6. Բաղրջան	29
7. Բազուկ և դազար	30
8. Սոխ	36
9. Վարունգ	40
10. Դդում	44
11. Լոբի և սխտու	46
12. Կանաչեղեն	49
13. Բանջարեղենի վաճառելը	52

18. Հ. Ազատյան. — Գյուղատնտեսական բանվորութ. և միջազգ. կոմմունիստական շարժումը (սպառ.) 40 »
19. Ն. Խան-Ս. Պյան. — Ուղեցույց արդյունավետ խողա- բուծության (սպառվ.) 15 »
20. Ֆերդինանդով. — Հավաքուծ. և նրա ոգուտն. (սպ.) 20 »
21. Ս. Գանելբեգ. — Լավ ե ուշ, քան յերբեք (ազրո- պիլիս) (սպառված) 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Կտավատը և կա- նեփը (սպառ.) 20 »

Թյունը (սպառ.)

24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անհատներից փայտեղեն բաց բողբուլու համար (պաշտոնական) 15 »
25. ԳրոՅ. Ս. Վ. Քալանթար. — Կաթնատու կովի կերակր. 30 »
26. Ս. Ս. Տրիֆոնով. — Ինչու պետք է ցելը շուտ անել 15 »
27. [Redacted] 20 »
28. [Redacted] 20 »
29. Լ. Սուբբոսից. — Կովի դատը (ազրո-պիլիս) 20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Տիզկանեփ (սպառ.) 5 »
31. Խ. Ս. Ֆեր-Ներսիսյան. — Պտղատու ծառերի փաստա- տուններն ու հիվանդությունները (սպառվ.) 25 »
32. Խ. Ս. Վզգալբեկյան. — Գյուղի հողաշինարարութ. 20 »
33. Արագի. — Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
34. Ֆալսացի. — Խորհրդավոր արտունջներ ազրո-զրույց 15 »
35. Խճկո-Սպեր. — Գյուղատնտ-անասնաբույժը և իր ազրո-զրույցը 20 »
36. Ս. Շրիգոյից. — Տասը պատգամ անասնապահին (բ. տպագր.) 20 »
37. Մ. Խանգազյան. — Մեղվարծության գործնական ձեռնարկ (սպառված) 60 »

Թյան հերթական խնդիրներից (սպառված)

38. Ս. Ս. Բանասյան. — Գուլթան, թե՛ արոր (սպառ.) 10 կ.
39. Վ. Բուկով. — Այժն աղքատի կոֆը ե (սպառված) 20 »
40. Խ. Ս. Ֆեր-Ներսիսյան. — Գոմաղըրը 20 »
41. Խ. Կուզնեցով. — Լենինը և գյուղացիությունը 30 »
42. Ս. Մուսեղյան. — Անտառը պետք է հաշվով կտրել 5 »
43. Խ. Ս. Ֆեր-Ներսիսյան. — Ինչպես պատվաստել պլա- դատու ծառերը 10 »

46. Է. Ս. Ղազարյան. — Յեռագաշտից դեպի սոցիալիզմ՝ 1 ու. 50 »
կոոպերացիայի վրայով
47. Վ. Ս. Միխայլով. — Տավարի վարակիչ հիվանդու- 5 »
թյունները 25 »
48. Մ. Թումանյան. — Վերկ 5 »
- ~~_____~~
50. Նոյեմբերի ճանապարհից (ժողով.) (սպառ.) 20 »
51. Պրոֆ. Ա. Վ. Քալանթար — Կաթնառատ կովի ընտ- 20 »
րութունը և նախիրի ազնվացումը
52. Հրահանգ գյուղատնտ. կոոպերատիվ ընկերութ. 20 »
տոմարագրելու կարգի մասին (հավ. «Գյուղ. կյանք»-ի)
53. ԽՍՀՄ Հողոգտագործության յեվ հողափոխա- 20 »
րության ընդհանուր հիմունքները
54. Է. Փիրուսյան. — Հողժողովուրդի 1927/28 թ. գործ-
ծունեությունը
55. Ա. Արսենյան. — Դեպի բերքի բարձրացում
56. Վ. Պ. Դոբրինցի. — Ձիերի արհեստական բեղմնա- 25 »
վորումը
57. Ա. Վերմիսյան. — Պողատու աչպին ու նրա խնամքը 45 »
58. Ա. Մարգարյան. — Վոչխարաբուծություն 50 »
59. Ա. Ա. յեվ Ա. Թ. — Բանջարաբուծություն 20 »
- ~~_____~~
- և գյուղատնտ. ինդուստրացումը 25 »

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Ի Ցեր-Ներսիսյան. — Ինչպես մշակել խաղողի այգի-
ները (Բ. տպագր.)
2. Տ. Ասլանյան. — Մեղվապահի ուղեցուց
~~_____~~
4. Ա. Բ. Խաչակյան. — Հանրամատչելի զբույցներ գլխի-
գործութ. մասին
- ԴԻՄՇԷՆ՝ Յերեվան, Հողժողովուրդի Հրատարակչություն,
Հայգրքի կենտրոնական յեվ գավառական գրա-
խանութներին, Գավհողքաժիններին:



